

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հրանտ Բազրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-580-28.08.2014-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է՝

1) տեղական արտադրության ալկոհոլային խմիչքների համար որպես ակցիզային հարկով հարկման բազա սահմանել միայն ենթասակցիզային ապրանքի արժեքը.

2) նվազեցնել տեղական արտադրության խաղողի հումքից արտադրվող ալկոհոլային խմիչքների համար ակցիզային հարկի դրույքաչափերը՝ միաժամանակ բարձրացնելով տեղական արտադրության էթիլային սպիրտի համար ակցիզային հարկի դրույքաչափերը:

Ըստ նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ նշված առաջարկությունների ընդունման արդյունքում կնվազեն խաղողի հումքից ստացված տեղական արտադրության ակոհոլային խմիչքների գները, ինչն էլ կնպաստի խաղողի արտադրության ծավալների աճին:

Այդ կապակցությամբ, հայտնում ենք, որ՝

1. Գինիների համար ակցիզային հարկի դրույքաչափերը 2002 թվականից չեն փոփոխվել, մինչդեռ գինիների շուկայական գներն անցած տասը տարվա ընթացքում էականորեն բարձրացել են: Գտնում ենք նաև, որ ակցիզային հարկի դրույքաչափերի նվազեցումը չի կարող էականորեն փոխել ենթասակցիզային ապրանքների գները, և հետևաբար չի ավելացնի խաղողի հումքից տեղական արտադրության ակոհոլային խմիչքների իրացման և խաղողի արտադրության ծավալները, քանի որ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողի հումքից արտադրված ակոհոլային խմիչքների (օրինակ՝ գինիների) հիմնական մասի շուկայական գնի մեջ ակցիզային հարկի մասնաբաժինը չափազանց փոքր է: Մասնավորապես, գինիների համար ներկայումս ակցիզային հարկի դրույքաչափը սահմանված է 10 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամ, ինչը նշանակում է, որ ակցիզային հարկն ապրանքի շուկայական գնի մեջ կազմում է առավելագույնը 5 տոկոս: Այսինքն, նախագծով առաջարկվող ակցիզային հարկի դրույքաչափերի իջեցման արդյունքում գինիների շուկայական գները, մեկ շիշ գինու հաշվարկով, կնվազեն առավելագույնը 15 դրամով, ինչն էական խթան չի կարող հանդիսանալ գինու սպառումը խթանելու համար:

2. Տեղական արտադրության ոգելից խմիչքների համար որպես ակցիզային հարկով հարկման բազա միայն ենթասակցիզային ապրանքի արժեքը սահմանելն անհնարին կդարձնի ակցիզային հարկով հարկվող օբյեկտների նկատմամբ հարկային մարմնի կողմից իրականացվող հարկային վարչարարությունը, հաշվի առնելով այն

հանգամանքը, որ ենթասակցիզային ապրանքի բացթողման գնի մեջ ներառվում են ապրանքի գինը ձևավորող բազմաթիվ տարրեր, օրինակ՝ ապրանքային նշան, շշի արժեք, ձեռք բերված լիցենզիաների համար կատարված ծախսեր, ամորտիզացիոն մասհանումներ և այլ նյութական ու ոչ նյութական ծախսեր: Արտադրանքի գնի վրա ազդող նշված գործոնների տարանջատումը գործնականում անհնար է, ինչը նշանակում է, որ անհնար կլինի նաև ենթասակցիզային ապրանքի արժեքի, հետևաբար նաև դրա համար հաշվարկվող ակցիզային հարկի գումարի ճիշտ հաշվարկումը: Սա է նաև այն հիմնական պատճառներից մեկը, որ միայն ենթասակցիզային ապրանքների արժեքի հիման վրա ակցիզային հարկի հաշվարկման մոտեցումները կիրառվում են այն երկրներում, որտեղ ենթասակցիզային ապրանքները հարկվում են բացառապես հաստատագրված դրույքաչափերով՝ կախված ապրանքի ֆիզիկական ծավալներից: Հայաստանի Հանրապետությունում միայն ֆիզիկական ծավալից կախված ակցիզային հարկի հաստատագրված դրույքաչափերի կիրառման արդյունքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բարձրարժեք ենթասակցիզային ապրանքների գծով հարկային բեռն էականորեն կնվազի տեղական արտադրության ենթասակցիզային ապրանքների համեմատությամբ, ինչը կարող է վնասել համանման ապրանքների տեղական արտադրությանը:

3. Նախագծով առաջարկվում է ակցիզային հարկը կիրառել տեղական արտադրության ապրանքի միայն բուն խմիչքի նկատմամբ, մինչդեռ, ներմուծված ապրանքի դեպքում փոփոխություն չի կատարվում, ինչը գինիների և խմորման ենթարկված այլ ըմպելիքների դեպքում կհանգեցնի տեղական արտադրության ապրանքի համեմատությամբ ավելի բարձր ակցիզային հարկի գանձման: Վերջինս կհանդիսանա ներմուծված ապրանքի նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորում և կարող է դիտվել որպես տեղական արտադրության ապրանքի հովանավորչության

միջոց: Հետևաբար, նախագիծը հակասում է ԱՀԿ-ի Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ) 3-րդ հոդվածով (Ազգային մոտեցում ներքին հարկման ու կանոնակարգումների մասով) Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններին:

Միաժամանակ, նշված ոլորտում ԵՄ, ԱՊՀ և մի շարք այլ երկրներում ակցիզային հարկի մասով գործող օրենսդրությանը համաձայն՝ ոգելից խմիչքների հանդեպ ակցիզային հարկի հարկման բազա է հանդիսանում խմիչքի ֆիզիկական ծավալը (100 տոկոս սպիրտի հաշվարկով) և այն կապված չի արտադրանքի իրացման գնից: Օրինակ՝ ԵՄ-ի մի շարք զարգացած երկրներում գինին ակցիզային հարկով չի հարկվում (Գերմանիա, Ավստրիա, Բուլղարիա, Կիպրոս), Ֆրանսիայում գինու հանդեպ ակցիզային հարկի դրույքաչափը կազմում է 3.6 եվրո/հլ, Մեծ Բրիտանիայում՝ 280.63 եվրո/հլ, Ֆինլանդիայում՝ 312 եվրո/հլ, Իռլանդիայում՝ 262.24 եվրո/հլ: Գինու հանդեպ ակցիզային հարկ չկիրառող կամ ցածր հարկ կիրառող երկրները հիմնականում այն երկրներն են, որոնք ունեն խաղողագործության զարգացման ուղղություն, իսկ բարձր ակցիզային հարկի դրույքաչափ կիրառող երկրները՝ գինի ներմուծող են:

Ելնելով շարադրվածից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արժույթի միջազգային հիմնադրամի Երկարաձգվող ֆինանսավորման ծրագրի առաջին ստուգման շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության մտադրությունների նախագծում ամրագրված է նաև ոգելից խմիչքների համար 2015 թվականից ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացման հարցը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքի նախագծի քննարկումից և համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ համատեղ, նոր օրենքի նախագծի մշակման աշխատանքներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Կարեն ԶՂմարիտյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումն առողջապահության
բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
վերաբերյալ**

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր

մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ակցիզային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Ակցիզային հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ Նախագծով ակցիզային հարկ է սահմանվում ակոհոլային խմիչքի բուն խմիչքի հանդեպ, ինչպես նաև Նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել մի շարք ակցիզային հարկի դրույքաչափերում:

Նախագծով կարգավորվող շրջանակները առնչվում են ակոհոլային խմիչքների շուկայի հետ: Նախագծի ընդունմամբ նշված շուկայում տարբերակցված մոտեցում կառաջանա ներքին արտադրողների և ներմուծող ընկերությունների միջև, ինչը հակասում է ԱՀԿ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՄԱԳՀ) Հոդված 3-ով (Ազգային մոտեցում ներքին հարկման ու կանոնակարգումների մասով) Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին՝ առաջացնելով մատակարարների միմյանց հետ մրցելու հնարավորության սահմանափակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *բացասական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

««Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է տեղական արտադրության ակոհոլային խմիչքների նկատմամբ կիրառվող ակցիզային հարկի*

հարկման բազայի և դրույքաչափերի հստակեցմանը և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ընդհանուր առմամբ ազդեցություն **չի նախատեսվում**:

Եզրակացություն

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է իջեցնել ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890 ծածկագրերով գինու արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափը, ինչպես նաև բարձրացնել ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրով էթիլային սպիրտի ակցիզային հարկի դրույքաչափը: Միաժամանակ առաջարկվում է ակցիզային հարկը հաշվարկել ոչ թե բացթողման գնի, այլ միայն տվյալ արտադրանքի արժեքի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ

1. ԱՏԳ ԱԱ 2204, 2205, 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890 ծածկագրերով գինու արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափի իջեցումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կթողնի բացասական ազդեցություն: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղողի հումքից արտադրված գինու արտադրանքի հիմնական մասի շուկայական գնի մեջ ակցիզային հարկի մասնաբաժինը չափազանց փոքր է, հետևաբար ակցիզային հարկի դրույքաչափերի նվազեցման նախագծով ներկայացված առաջարկությունը չի կարող էականորեն փոփոխել ենթաակցիզային ապրանքների գները և ավելացնել խաղողի հումքից տեղական արտադրության ավրոհողային խմիչքների իրացման ծավալները: Հաշվի առնելով, որ դրույքաչափերի իջեցման արդյունքում սպառման ծավալներն էականորեն չեն փոխվի, կարելի է եզրակացնել, որ դրույքաչափի 20 տոկոս իջեցումը կհանգեցնի նշված արտադրատեսակների գծով ակցիզային հարկի մուտքերի 20 տոկոս նվազմանը:

2. ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրով էթիլային սպիրտի ակցիզային հարկի դրույքաչափերի ավելացումը մեր կարծիքով ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կթողնի չեզոք

ազդեցություն: Հաշվի առնելով վերջին երեք տարիների ընթացքում նշված արտադրատեսակի սպառման ծավալների կրճատման միտումը, մեր գնահատականներով դրույքաչափի առաջարկվող բարձրացումը կհանգեցնի սպառման ծավալների կրճատման առավել բարձր տեմպի, ինչն ակցիզային հարկի մուտքերի վրա կթողնի բացասական ազդեցություն: Այդ բացասական ազդեցությունը մեր կարծիքով կփոխհատուցվի դրույքաչափի բարձրացման հետևանքով լրացուցիչ հաշվարկվող ակցիային հարկի մուտքերի հաշվին, որի արդյունքում դրույքաչափի առաջարկվող բարձրացումից ակցիզային հարկի եկամուտների լրացուցիչ աճ դժվար է կանխատեսել:

3. Ակցիզային հարկը միայն տվյալ արտադրանքի (համապատասխանաբար գինու և էթիլային սպիրտի արտադրատեսակի) արժեքի նկատմամբ հաշվարկելը կհանգեցնի հարկման բազայի նվազմանը, որը բացասական ազդեցություն կթողնի ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, սակայն նշված ազդեցության հստակ չափը հնարավոր չէ գնահատել՝ արտադրանքի ինքնարժեքի ձևավորման տարրերի հստակ տարանջատման և տեղեկատվության բացակայության պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա ընդհանուր առմամբ կթողնի բացասական ազդեցություն:

Միաժամանակ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-580-28.08.2014-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրերի 2204, 2205, 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890 տողերի 3-րդ սյունյակի «եւ ակցիզային հարկի» բառերից հետո լրացնել «միայն գինիների արժեքի նկատմամբ» բառերը:

Հոդված 2. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրերի 2204, 2205, 2206 00 390, 2206 00 590, 2206 00 890 տողերի 4-րդ սյունյակը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «8 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 80 դրամ»:

Հոդված 3. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրի 2206 տողի 3-րդ սյունյակի «եւ ակցիզային հարկի» բառերից հետո լրացնել «միայն խմորման ենթարկված ըմպելիքների արժեքի նկատմամբ» բառերը:

Հոդված 4. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրի 2206 տողի 4-րդ սյունյակը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «20 տոկոս, բայց ոչ պակաս քան 1 լիտրի համար 250 դրամ»:

Հոդված 5. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրերի 2208 20, 2208 30, 2208 40 տողերի 3-րդ սյունյակի «եւ ակցիզային հարկի» բառերից հետո լրացնել «միայն վիսկիի, ռոմի եւ այլ սպիրտային թրմերի արժեքի նկատմամբ» բառերով:

Հոդված 6. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրի 2207 տողի 3-րդ սյունյակի «եւ ակցիզային հարկի» բառերից հետո լրացնել «միայն էթիլային սպիրտի արժեքի նկատմամբ» բառերը:

Հոդված 7. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 27-ի ՀՕ-79 օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի ԱՏԳ ԱԱ ծածկագրի 2207 տողի 4-րդ սյունյակը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «60 տոկոս, բայց ոչ պակաս քան 1 լիտրի համար 1000 դրամ»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**««ԱԿՑԻԶՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Նշված փոփոխությունները եւ լրացումները «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կապված են երկու հանգամանքի հետ:

Առաջին. աշխարհում ընդունված է, որ ակոհոլային խմիչքների ակցիզը սահմանվում է բուն խմիչքի նկատմամբ՝ շրջանցելով տարան, պիտակը, խցանը եւ այլն: Տրամաբանությունը պարզ է. ինչո՞ւ, օրինակ, ակցիզը պետք է սահմանվի պիտակի արժեքի վրա:

Երկրորդ. բանն այն է, որ գործող ակցիզային հարաբերությունը, օրինակ, խաղողի գինու կամ մրգերից պատրաստած գինեկության եւ ցորենից ստացված օղու նկատմամբ հավասար չէ: Ակցիզային հարկը գինիների նկատմամբ, օրինակ, սահմանված է 10 տոկոս, էթիլային սպիրտի (օղու) նկատմամբ՝ 50 տոկոս: Մինչ դեռ օղին 40 աստիճան է, ունենալով 4 անգամ ավել սպիրտայնություն, դրան գումարած այն կարող է շալցվել ու վաճառվել թորման հաջորդ օրը: Գինին, նախ, անցնում է ֆերմենտացիայի ցիկլ՝ առնվազն 3 շաբաթ, եւ դրանից հետո պետք է մի քանի ամիս հանգստանա: Այդ իսկ պատճառով, նկատի ունենալով շրջանառության երկարությունը, արհեստականորեն 10 տոկոս ակցիզը գինու վրա շատ ավելի բարձր է քան թե օղու վրա: Բացի դա գինու շիշը ավելի էժան չէ քան օղու շիշը, մինչ դեռ գինու շի միջի պարունակությունը սպիրտայնությամբ 4 անգամ ավելի պակաս է: Հետեւապես 10 եւ 50 տոկոս ակցիզային դրույքների կիրառման դեպքում օղին միանշանակ դառնում է ավելի շահավետ ակոհոլային խմիչք: Նկատի ունենալով նաեւ կենսամակարդակի ցածր պայմանները՝ օղու մեծ ծավալներով սպառումը Հայաստանում (տարեկան 12 մլն. լիտր) գինու համեմատ (տարեկան 5 մլն. լիտր) ունի հստակ տնտեսական պատճառաբանություն՝ օղի խմելու միջոցով մարդիկ պարզապես բավարարում են իրենց սննդի պահանջները: Այսպիսով, օղի խմելը Հայաստանում ոչ թե ավանդույթ է, այլ տնտեսական անհրաժեշտություն:

Ահա այս փոփոխությունների եւ լրացումների արդյունքում մի փոքր կբարձրանան օղու գները, մի փոքր կիջնեն գինու, գինեկության ինչպես նաեւ խաղողից պատրաստված այլ ակոհոլային խմիչքների գները (օրինակ՝ կոնյակ), ինչի արդյունքում կշահի խաղողի արտադրությունը: Համեմատաբար կնվազի ցորենի պահանջարկը, որի նկատմամբ Հայաստանը նետտո ներմուծող է: Հիփոթետիկ տնտեսական էֆեկտը կարելի է գնահատել 35-40 մլն. դոլար: